<<21>> 12 2022թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 159
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ,ոստիկանության գնդապետ՝ Վ.Պ.Գրիգորյանս քննելով <<07>> 12 2022թ. Թիվ 159 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ 07.12. 2022թ.-ին 10:30-ի սահմաններում Վահագն Գագիկի Հակոբյանը /ծնվ.12.05.1982թ., բն է Մասիս 6-րդ փող. տուն. 23/ գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի տաղավարում օգտագործել է ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վահագն Գագիկի Հակոբյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝<< >>_____2022թ. _____

Պետ

ոստիկանության գնդապետ Վ.Պ.Գրիգորյան